ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Կոտայքի մարզպետի աշխատակազմը հայտարարում է մրցույթ ՀՀ Կոտայքի մարզի «Բյուրեղավանի մանկապատանեկան մարզադպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնն զբաղեցնելու համար

Տնօրենի թափուր պաշտոնի մրցույթին մասնակցելու համար սահմանվում են հետևյալ պայմանները՝

1) ՀՀ քաղաքացիություն.

2) բարձրագույն կրթություն.

3) հանրային ծառայության առնվազն չորս տարվա ստաժ կամ առնվազն հինգ տարվա մասնագիտական աշխատանային ստաժ կամ սպորտի բնագավառի առնվազն երեք տարվա աշխատանքային ստաժ:

Հիմնական գործառույթները՝

1) ֆիզիկական կուլտուրայի և սպորտի միջոցներով պարապողների առողջության պահպանում և ամրապնդում,

2) հայրենիքի պաշտպանությանը պատրաստ երիտասարդության ֆիզիկական պատրաստակամության ապահովում,

3) ընտրված մարզաձևում պարապողների սպորտային ընդունակությաունների կատարելագործում

4) ՀՀ ազգային հավաքական թիմերի համար հերթափոխի պատրաստում

5) հանրակրթական դպրոցի հետ սերտ կապի հաստատում և ֆիզիկական կուլտուրայի արտադասարանական աշխատանքների, ֆիզկուլտուրային առողջարանական միջոցառումների կազմակերպման օժանդակում:

Մրցույթին մասնակցել ցանկացողները թղթային կամ էլեկտրոնային տարբերակով պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝

1) լրացված դիմում, **ձևը կցվում է,**

2) ինքնակենսագրություն, **ձևը կցվում է,**

3) անձնագիր կամ նույնականացման քարտ (բնօրինակը և պատճենը, իսկ էլեկտրոնային եղանակով դիմելու դեպքում՝ բնօրինակների սկանավորված տարբերակը),

4) 2 գունավոր լուսանկար՝ 3 x 4 չափսի (էլեկտրոնային եղանակով դիմելու դեպքում՝ էլեկտրոնային),

5) բարձրագույն կրթությունը հավաստող դիպլոմը (դիպլոմները) (բնօրինակը (բնօրինակները) և պատճենը (պատճենները), իսկ փաստաթղթերն էլեկտրոնային տարբերակով ներկայացնելու դեպքում՝ բնօրինակի (բնօրինակների) սկանավորված տարբերակը),

6) օտար լեզվի իմացությունը հավաստող փաստաթուղթը (բնօրինակը (բնօրինակները) և պատճենը (պատճենները) առկայության դեպքում, իսկ էլեկտրոնային եղանակով դիմելու դեպքում՝ բնօրինակի (բնօրինակների) սկանավորված տարբերակը)՝ առկայության դեպքում,

7) գիտական աստիճանի վկայականը (բնօրինակը (բնօրինակները) և պատճենը (պատճենները) առկայության դեպքում, իսկ էլեկտրոնային եղանակով դիմելու դեպքում՝ բնօրինակի (բնօրինակների) սկանավորված տարբերակը)՝ առկայության դեպքում,

8) աշխատանքային գործունեությունը հավաստող վավերացված համապատասխան տեղեկանք (փաստաթուղթ), որը կբավարարի սահմանված պահանջներին և հաշվառման համակարգի տեղեկատվական բազայում առկա տվյալները ներառող տեղեկանք նախկին աշխատանքային գործունեության վերաբերյալ:

Քաղաքացին մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերը հանձնում է առձեռն կամ էլեկտրոնային տարբերակով:

Փաստաթղթերն ընդունվում են 2025 թվականի մայիսի 8-ից հունիսի 4-ը ներառյալ ժամը 11:00-ից 16:00-ը, բացի հանգստյան (շաբաթ, կիրակի) և օրենքով սահմանված ոչ աշխատանքային՝ տոնական և հիշատակի օրերից ՀՀ Կոտայքի մարզ, ք. Հրազդան, Կենտրոն թաղամաս, Սահմանադրության հրապարակ, Վարչական շենք հասցեով (☎ 0223-2-05-15, **էլեկտրոնային փոստի հասցեն՝** kotayk.andznakazm@mta.gov.am):

«Բյուրեղավանի մանկապատանեկան մարզադպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության զարգացման՝ դիմողի կողմից մշակված հայեցակարգը՝ թղթային և էլեկտրոնային տարբերակով պետք է ներկայացվի մինչև **2025 թվականի հունիսի 13-ին՝ ժամը 10:00-ն**:

Մրցույթի թեստավորման փուլը կանցկացվի **2025 թվականի հունիսի 13-ին՝ ժամը 10:30-ին**, ՀՀ Կոտայքի մարզպետի աշխատակազմի վարչական շենքում (ՀՀ Կոտայքի մարզ, ք. Հրազդան, Կենտրոն թաղամաս, Սահմանադրության հրապարակ, Վարչական շենք):

Մրցույթի հարցազրույցի փուլը կանցկացվի **2025 թվականի հունիսի 13-ին՝ ժամը 15:30-ին**, ՀՀ Կոտայքի մարզպետի աշխատակազմի վարչական շենքում (ՀՀ Կոտայքի մարզ, ք. Հրազդան, Կենտրոն թաղամաս, Սահմանադրության հրապարակ, Վարչական շենք):

Հիմնական աշխատավարձը՝ **350 000** (երեք հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ:

Մրցույթի թեստավորման փուլին նախապատրաստվելու համար անհրաժեշտ նորմատիվ իրավական ակտերի հստակ շրջանակը՝

«Աշխատանքային օրենսգիրք» հոդվածներ՝ 5, 14, 20, 46, 85, 88,99, 101, 102, 109, 111-115, 120, 147, 158, 166, 179, 228

հղումը՝ https://www.arlis.am/documentview.aspx?docid=146722

«Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենք հոդվածներ՝ 3-18, 22, 25

հղումը՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=161510

ՀՀ Սահմանադրություն. հոդվածներ՝ 6, 10, 14, 15, 21,, 26, 27, 34, 36, 38, 42, 47, 48, 57, 60, 66, 72, 73, 109, 121, 125, 131, 147, 153, 160, 162, 163, 168, 184, 185, 206

հղումը՝ https://www.arlis.am/documentview.aspx?docid=143723

«Կրթության մասին» օրենք հոդվածներ՝ 16,23,36,37,40

հղումը՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=166466

«Հանրակրթության մասին» օրենք հոդվածներ՝ 7,8,13,16,17,17.1,17.2,17.3

հղումը՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=165006

«Երեխայի իրավունքների մասին» օրենք հոդվածներ՝ 5,11,13,14,29

հղումը՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=165162

«Նախադպրոցական կրթության մասին» օրենք հոդվածներ՝ 4, 6, 7, 8, 9, 12, 13, 15, 19, 20, 26,28,29

հղումը՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=165013

Հարցազույցի փուլին նախապատրաստվելու համար անհրաժեշտ նորմատիվ իրավական ակտերի և հմտությունների շրջանակն է՝

(առաջնորդում, ռազմավարական պլանավորում, որոշումների կայացում, ժամանակի կառավարում, հաղորդակցման հմտություններ, տրամաբանելու և տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն, ֆինանսատնտեսական գործունեության իրականացման կարողություն, աշխատանքային էթիկայի և բարեվարքության կանոնների իմացություն):

«Աշխատանքային օրենսգիրք

հղումը՝ https://www.arlis.am/documentview.aspx?docid=146722

«Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենք

հղումը՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=161510

«Հանրակրթության մասին» օրենք հղումը՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=165006

«Երեխայի իրավունքների մասին» օրենք

հղումը՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=165162

«Նախադպրոցական կրթության մասին» օրենք

հղումը՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=165013

«Բարեվարքություն» կոմպետենցիա

https://www.gov.am/u_files/file/Haytararutyunner/3.pdf

«Աշխատակազմի (անձնակազմի) կառավարում» կոմպետենցիա

https://www.gov.am/u_files/file/Haytararutyunner/1.pdf

«Որոշումների կայացում» կոմպետենցիա

https://www.gov.am/u_files/file/Haytararutyunner/7.pdf

(Թեստային հարցերի նմուշը կցվում է)

Հայեցակարգը պետք է՝

1) լինի առավելագույնը 20 էջ,

2) պարունակի պետական կազմակերպության ոլորտի առկա խնդիրների համակարգային վերլուծությունը և գնահատումը,

3) ներառի պետական կազմակերպության բնագավառի զարգացման և բարեփոխման առաջարկները:

Մրցույթին մասնակցել ցանկացող քաղաքացիները մրցույթի վերաբերյալ հարցերի և լրացուցիչ տեղեկությունների համար կարող են դիմել ՀՀ Կոտայքի մարզպետի աշխատակազմի ԱԿՓՀՀԿՎ անձնակազմի կառավարման բաժին (հասցե՝ ՀՀ Կոտայքի մարզ, ք. Հրազդան, Կենտրոն թաղամաս, Սահմանադրության հրապարակ, Վարչական շենք, 4-րդ հարկ, հեռախոսահամար՝ ☎ 0223-2-05-15):

Թեստային առաջադրանք

Հայաստանի Հանրապետությունում պետական մշակութային քաղաքականությունը կազմակերպվում է մշակույթի պահպանման, տարածման և զարգացման պետական ծրագրերով, որոնք որպես օրենք հաստատում է.

1. ՀՀ կառավարության ներկայացմամբ ՀՀ ազգային ժողովը,
2. ՀՀ կառավարությունը,
3. ՀՀ կառավրությունը՝ լիազորված պետական մարմնի ներկայացմամբ,
4. ՀՀ ազգային ժողովը:

Գործադիր մարմնի պաշտոնում նշանակված անձի լիազորությունները դադարեցվում են իրավասու մարմնի որոշմամբ, եթե.

1. լրացել է նրա 65 տարին,
2. լրացել է նրա 66 տարին,
3. լրացել է նրա 60 տարին,
4. լրացել է գործադիր մարմնի պաշտոն զբաղեցնելու առավելագույն տարիքը և լրացուցիչ մեկ տարին:

Պետական կազմակերպությունը.

1. շահույթ ստանալու նպատակ հետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող ոչ առևտրային կազմակերպություն է,
2. շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող, ոչ առևտրային կազմակերպություն է,
3. շահույթ ստանալու նպատակ հետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող առևտրային կազմակերպություն է,
4. շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող ոչ առևտրային կազմակերպություն է:

Աշխատողը կամ գործատուն իրավունք ունեն լուծելու ժամանակավոր աշխատանքային պայմանագիրը նախքան դրա գործողության ժամկետը լրանալը՝ այդ մասին ծանուցելով միմյանց.

1. առնվազն երեք օր առաջ,
2. առնվազն երեք օր առաջ գրավոր ձևով,
3. հինգ օր առաջ,
4. առնվազն հինգ օր առաջ գրավոր ձևով:

Նշվածներից ովքեր չեն կարող լինել կուսակցության անդամ՝

1. դատավորները և պետական կառավարման մարմինների ղեկավարները,
2. պետական կառավարման մարմինների ղեկավարները,
3. դատավորները,
4. մանկավարժական աշխատանք իրականացնող անձինք:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի ապրիլի 22-ի «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների գործադիր մարմինների մրցույթի, ընտրության (նշանակման) ընդհանուր կարգը և չափորոշիչները սահմանելու մասին» № 539-Ն որոշման հավելվածի 17-րդ կետը՝ ՀՀ Կոտայքի մարզպետի աշխատակազմը հասարակական կազմակերպություններին հրավիրում է դիմելու «Բյուրեղավանի մանկապատանեկան մարզադպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնն զբաղեցնելու համար հայտարարված մրցույթի մրցութային հանձնաժողովում ընդգրկվելու նպատակով:

Դիմել կարող են այն հասարակական կազմակերպությունները, որոնց կանոնադրական նպատակները և խնդիրներն առնչություն ունեն պետական կազմակերպության գործունեության ոլորտի հետ և դիմելու ամսվան նախորդող առնվազն երկու տարվա ընթացքում գործունեություն են ծավալել տվյալ ոլորտում: Սույն պահանջները բավարարող հասարակական կազմակերպությունների դիմումների հիման վրա համակարգչային ծրագրով՝ պատահական ընտրության սկզբունքով ընտրվելու է մեկ հասարակական կազմակերպություն:

Բոլոր հետաքրքրված հասարակական կազմակերպությունները ստորագրված դիմումները կարող են ներկայացնել՝ ուղարկելով kotayk.andznakazm@mta.gov.am էլեկտրոնային հասցեին:

Դիմումի մեջ անհրաժեշտ է նշել՝

1. կազմակերպության անվանումը,
2. կազմակերպության գտնվելու վայրը, իրավաբանական հասցեն,
3. գործադիր մարմնի ղեկավարի անուն, ազգանունը, հեռախոսահամարը և էլեկտրոնային փոստի հասցեն,
4. կազմակերպության կանոնադրությունը:

Դիմումներն ընդունվում են 2025 թվականի մայիսի 8-ից հունիսի 4-ը ներառյալ ամեն օր՝ ժամը 11:00-ից 16:00-ն, բացի հանգստյան (շաբաթ, կիրակի) և օրենքով սահմանված ոչ աշխատանքային՝ տոնական և հիշատակի օրերից ՀՀ Կոտայքի մարզ, ք. Հրազդան, Կենտրոն թաղամաս, Սահմանադրության հրապարակ, Վարչական շենք հասցեով (☎ 0223-2-05-15, էլեկտրոնային փոստի հասցեն՝ kotayk.andznakazm@mta.gov.am):

3x4
լուսանկար

ՀՀ Կոտայքի մազրպետի աշխատակազմ
ՀՀ Կոտայքի մարզպետ Ահարոն Սահակյանին

_____-ից
հավակնորդի անունը, հայրանունը, ազգանունը

_____
հավակնորդի հաշվառման վայրը

_____
հավակնորդի հեռ. (աշխ., բնակ., բջջ.) էլ. փոստի հասցե, հեռ.

_____
անձնագրի կամ նույնականացման քարտի
սերիան, համարը, երբ և ում կողմից է տրվել

ԴԻՄՈՒՄ

Ծանոթանալով ՀՀ Կոտայքի մարզպետի աշխատակազմի կողմից հրապարակված հայտարարությանը՝ խնդրում եմ ինձ թույլատրել մասնակցելու «Բյուրեղավանի մանկապատանեկան մարզադպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնն զբաղեցնելու համար անցկացվող մրցույթին:

Մրցութին մասնակցելու համար ներկայացնում եմ հետևյալ փաստաթղթերը՝

1. Ինքնակենսագրություն -- էջ:
2. Անձնագիր, նույնականացման քարտ -- էջ:
3. Գունավոր լուսանկար -- հատ:
4. Բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (փաստաթղթեր) -- էջ:
5. Օտար լեզվի իմացությունը հավաստող փաստաթուղթ (փաստաթղթեր) -- էջ:
6. Գիտական աստիճանի վկայական -- էջ:
7. Աշխատանքային գործունեությունը հավաստող վավերացված համապատասխան տեղեկանք (փաստաթուղթ) -- Էջ:

Սույնով հայտնում եմ, որ.

1) չեմ դատապարտվել հանցագործության կատարման համար, և դատվածությունը սահմանված կարգով հանված կամ մարված չէ,

2) օրենքի համաձայն չի արգելվել որոշակի պաշտոններ զբաղեցնել կամ չեմ զրկվել որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից.

3) նախորդ 3 տարվա ընթացքում չեմ եղել սնանկանալու պատճառով լուծարված և կազմակերպության պարտատերերի օրինական պահանջները չբավարարած կազմակերպության ղեկավար:

Նախազգուշացված եմ՝ կեղծ տվյալներ և փաստաթղթեր ներկայացնելու համար, պաշտոնում նշանակվելու դեպքում զբաղեցրած պաշտոնից ազատվելու և սահմանված կարգով պատասխանատվության ենթարկվելու մասին:

Դիմող՝_____ « » _____2025 թ.

ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Անունը, հայրանունը, ազգանունը	
Ծննդյան օրը, ամիսը, տարեթիվը	
Ծննդյան վայրը, երկիրը	
Հաշվառման բնակավայրը	
Մշտական բնակավայրը	
Քաղաքացիությունը	
Այլ քաղաքացիություն, եթե կա	
Ընտանեկան դրությունը (պարտադիր չէ պատասխանել)	
Օտար լեզուների իմացությունը. բանավոր. նշել լեզուն և իմացության մակարդակը՝ վատ, բավարար կամ լավ	
Օտար լեզուների իմացությունը. գրավոր. նշել լեզուն և իմացության մակարդակը՝ վատ, բավարար կամ լավ	
Ուսումնառությունը, կրթությունը. թվել կրթօջախները, տարիները, մասնագիտությունը (մասնագիտությունները)	
Աշխատանքային գործունեությունը. թվել աշխատավայրը (աշխատավայրերը), տարիները, պաշտոնը (պաշտոնները)	
Մասնագիտական ոլորտներում գործունեության փորձի նկարագիրը. թվել հիմնարկը (հիմնարկները) կամ կազմակերպությունը (կազմակերպությունները), տարիները, մասնագիտությունը (մասնագիտությունները)	
Վերապատրաստումները. թվել տարիները, ծրագրերը, մասնակցության կարգավիճակը	
Այլ տեղեկություններ. գիտական հոդվածներ, մենագրություններ, պետական, կառավարական և այլ պարգևներ: Հնարավորության դեպքում նշել համացանցային հղումները	
Այլ տեղեկություններ, որոնք անհրաժեշտ եք համարում տրամադրել	
Հեռախոսահամար	
Էլեկտրոնային հասցե	
Փոստային հասցե	
Անհատական բլոգը կամ համացանցային էջը (առկայության դեպքում)	